ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 58

ք. Երևան 25.05.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Լաբորատոր և քիմիական ազդանյութեր»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/10» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԻ ԹՈՒ ԲԻ» ՍՊԸ -ն (այսուհետ՝ Մասնակից):

04.04.2023թ.-ին կայացած նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով վերջինիս մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

07.04.2023թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից չեն շտկվել 04.04.2023թ.-ին ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ուղարկված լիազորագրի գործողության ժամկետը լրացած էր, լիազորագիրը տրված էր 24.03.2022թ 3 ամիս ժամկետով, այնինչ Մասնակցի կողմից Armeps (www.armeps.am) համակարգ հայտ ներկայացվել է 24.03.2023թ.-ի դրությամբ, ինչը վկայում է, որ Ավագյան Վրեժը Մասնակցի հայտում առկա փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության չուներ, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջը՝ որոշել է Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ «ԲԻ ԹՈՒ ԲԻ» ՍՊԸ -ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ